Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովվում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդավանի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Ուսուցիչների համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարինե Ղարագյոզյան

Կատարող՝ Լուսինե Ազատյան

Բերդավան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն..... 2
Ներածություն..... 3

1. Ուսուցիչների համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում

1.1 Ուսուցչի և սովորողի ծնողի համագործակցությունը՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց 5

1.2 Ծնողի ներգրավվածության ուղիները դպրոցի կյանքին.....11

Առաջարկություն/եզրակացություն.....18
Գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակությունն առաջնություն ունի կրթության նկատմամբ: Մարդուն ստեղծում է դաստիարակությունը:

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի

Ուսուցման իսկական առարկան մարդուն նախապատրաստելն է մարդ լինելու համար:

Նիկոլայ Պիրոգով

Յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնարար իրավունք, ինչն ամրագրված է ՀՀ օրենքներով, միջազգային պայմանագրերով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման կարևորագույն գործոններից մեկը՝ ծնողների, աշակերտների և մասնագետների միջև համագործակցությունն է: Երբ ընտանիքը և ուսումնական հաստատությունը աշխատում են համագործակցելով, երեխայի կարիքին համապատասխան միջավայրային հարմարեցումների ապահովումն առավել հեշտ է դառնում, ինչի արդյունքում շահում է հենց երեխան: Այժմ, երբ երեխայի հետ փոխգործակցության օպտիմալ մոդելը ուղղված է անձին, ուսումնական հաստատությունում կրթական ծրագրերը պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով սովորողի անհատակունությունը:

Ինչպես հայտնի է անհատականությունը ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքում, և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը: Շատ հաճախ կարելի է կարծիք լսել , որ ամեն ինչ ընտանիքից է գալիս: Սա իսկապես այդպես է: Հիմնական բնավորության գծերը կա՛մ գենետիկորեն դրված են, կա՛մ ձևավորվում են ծնողների ազդեցության տակ մանկության տարիներին: Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում: Այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից, կարող են հավասարապես սատկել կամ բողբոջել դպրոցական միջավայրում ՝դասարանի թիմի ,ուսուցիչների և դասղեկի ազդեցության տակ: Այդ իսկ պատճառով պետք է իրականացնել համագործակցություն ուսուցչի և սովորողի ընտանիքի հետ: Եվ այդ համագործակցությունը գնալով դառնում է ավելի արդիական և պահանջված : Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է

նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը: Ուսուցչի և սովորողիծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի՝հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել ծնող- ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որն ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ,որ դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն է ունենում աշակերտների հաջողության համար:

Հետազոտության խնդիրը: Սահմանել այն եղանակներն ու ձևերը, որոնց շրջանակներում թույլատրելի է և անհրաժեշտ, որպեսզի ծնողն ու ուսուցիչը, միմյանց փոխօգնելով ու փոխլրացնելով, նպաստեն, որ ուսումնական գործընթացում սովորողն ունենա գիտակցված մոտեցումներ, ունենա կրթական չափորոշիչների վերջնարդյունքներին համապատասխան գիտելիք, հմտություններ ու կարողություններ:

1.1 Ուսուցչի և սովորողի ծնողի համագործակցությունը՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց:

<< Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը , և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա >>:

Սուխումլինսկի

Դպրոցի և սովորողի ընտանիքի համագործակցությունը երկարատև և նպատակաուղղված աշխատանքի արդյունք է, որը ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան պայմանների և դաստիարակության առնձնահատկությունների համակողմանի և հետևողական ուսումնասիրություն: Ծնողների և մանկավարժների համագործակցությունը նախատեսում է երեխայի հանդեպ միասնական պահանջների մշակում,դաստիարակչական խնդիրների հստակեցում և այդ խնդիրների իրականացման ուղղությամբ մանկավարժների և ծնողների համատեղ գործունեության ծրագրի մշակում:

Ընտանիք-մանկավարժ փոխհարաբերությունների բնույթը պայմանավորված է ծնողների՝դպրոցի հանդեպ վերաբերմունքից: Տարբեր ծնողներ տարբեր կերպ են տեսնում դպրոցում դաստիարակչական գործընթացի մեջ իրենց դերը,տարբեր ինտելեկտուալ մակարդակ ունեն և տարբեր դաստիարակություն են տալիս իրենց երեխաներին:Այդ պատճառով էլ ընտանիքի հետ համագործակցությունը պետք է հիմնվի տարբերակված մոտեցման վրա: Մյուս կողմից՝հարցեր կան,որ հուզում են հավասարապես բոլոր ծնողներին:Այդ կարգի հարցերը կարող են քննարկման դրվել ընդհանուր ծնողական ժողովներին:Մանկավարժը պետք է ծնողների հոգեբանա-մանկավարժական իրազեկման տարբեր ձևեր նախատեսի:Ծնողների իրազեկման դասախոսությունների թեմատիկան որոշելիս ծնողների կարծիքը պետք է առաջնային լինի: Ծնողներին պետք է ներգրավվել դպրոցական աշխատանքների կառավարման և դասարանի գործունեության կազմակերպման գործընթացում,ինչը ենթադրում է.

- Ծնողների՝ երեխաների դաստիարակության հարցերի և դպրոցական կյանքի խնդիրների քննարկում,որոշումների կայացում,
- Դաստիարակչական աշխատանքների կազմակերպման մեջ ծնողների ընդգրկում,տոնակատարությունների ,էքսկուրսիաների կազմակերպման աջակցություն,մասնագիտական կողմնորոշման հարցերում,

- Ծնողական ինքնակառավարման մարմինների և դրանց աշխատանքի կազմակերպում(ծնողական ժողովներ,կոնֆերանսներ,ծնողկոմիտե): /1/

Համագործակցության բովանդակությունն ու եղանակները հստակեցվում են ուսումնական տարվա սկզբին՝ծնողների և երեխաների համատեղ գործունեության պլանավորման ընթացքում:

Ծնողական ժողովների նշանակությունը.Նախ փորձենք հասկանալ , թե ինչու է հարկավոր հավաքել ծնողներին և պետք են արդյոք ծնողական ժողովները, թե դրանք կորցրել են իրենց արդիականությունը:

Առաջին հերթին հարկավոր է ստանալ այնպիսի տեղեկություններ,որոնք անհրաժեշտ են երեխաների հետ աշխատելիս : Չէ որ,ով գիտի կարևոր տղեկություններ երեխայի մասին ,նա էլ տիրապետում է դաստիարակչական իրավիճակին: Դասղեկի համար այդպիսի տեղեկությունները նրա մասնագիտական հարստությունն են ,որոշումներ ընդունելու հիմքը: Այդ իսկ պատճառով պետք է ամենայն մանրակրկտությամբ պատրաստվել ծնողական ժողովներին: Օրինակ ,ուսումնական տարվա սկզբին կարել է առաջարկել լրացնել այսպիսի հարցաթերթիկ.

1. Ինչ ռեժիմով է ապրում երեխան տանը,
2. Մշտական տնային ինչ պարտականություններ ունի,
3. Ինչով է զբաղվում տանը ազատ ժամանակ,
4. Հաճույքով է արդյոք հաճախում դպրոց,
5. Թերություններ և առավելություններ,
6. Որ առարկան է սիրում և որը՝ ոչ…

Իհարկե,ծնողների պատասխաններից չի կարելի սպասել լիովին անկեղծություն, բայց տեղեկությունները կարող են մտածելու տեղիք տալ: Ծնողական ժողովները կարևոր նշանակություն ունեն նաև ծնողների համար,քանի որ դա նրանց թույլ է տալիս մշտապես տեղեկություն ստանալ

իրենց երեխաների մասին՝ լինի դա ձեռքբերումների թե դժվարությունների մասին,որն էլ իր հերթին թույլ է տալիս կատարել ճիշտ որոշումներ երեխայի դաստիարակության հարցում:

Ընտանեկան դաստիարակության ազեցությունը. Ընտանեկան կյանքի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է:

Սխալ է կարծել, որ երեխան մաքուր թուղթ է, իսկ մենք՝ նկարիչներ՝ կախարդական վրձիններով: Այդ թղթի վրա արդեն կան էսքիզներ, որոնք մենք պարզապես պետք է ավարտին հասցնենք՝ փորձելով այդ ընթացքում նրանց համար հեղինակություն դառնալ: Իհարկե՝ բարդ է երեխա դաստիարակելը: Չէ՞որ դաստիարակությունը գործընթաց է, որը կախված է բազմաթիվ հանգամանքներից՝ մեր համոզմունքներից, մեր ծնողների համոզմունքներից, մեր առողջությունից ու բնավորությունից, ընտանիքի ամբողջականությունից, երեխաների քանակից և մեր ֆինանսական հնարավորություններից:
Երեխաների համար ամենագործուն օրինակը ծնողներն են:
Երեխային պետք է դաստիարակել մանկուց, այլապես ուշ կլինի: Ինչպես մեր մեծերն էին ասում,« Երեխային բարուրի մեջ պետք է դաստիարակել»,այսինքն՝ ծնված օրվանից: Երեխայի ճիշտ դաստիարակության համար շատ մեծ նշան ակություն ունի շրջապատը, սակայն ամեն դեպքում երեխան նախ դաստիար ակվում է ընտանիքում, հետո՝ դպրոցում: Ծնողները՝ հայրն ու մայրը, պետք է լրջորեն զբաղվեն երեխայի դաստիարակությամբ:
Շատ կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում:
Բոլորս ցանկանում ենք, որ մեր երեխան լինի առողջ, խելացի, հաջողակ: Եվ յուրաքանչյուրը ձգտում է տալ այդ ամենը երեխային՝ կիրառելով դաստիարակության տարբեր ձևեր: Սակայն երբեմն անսահման սիրո մեջ

ծնողները սխալներ են թույլ տալիս ու կորցնում հեղինակությունը երեխայի մոտ, և դաստիարակության գործընթացն ավելի է բարդանում: Հեղինակություն ունեցող ծնողի կարծիքը երեխայի համար ամեն ինչից արժեքավոր է: Նրա հետ երեխան ուզում է ու իրեն հաճելի է ժամանակ անցկացնել, նրա հետ կիսվում է, կարևորում էծնողի կյանքն ու հոգեկանվիճակը: Որքան էլ տարօրինակ թվա, հեղինակություն դառնալն այդքան էլ հեշտ չէ, քանի որ դրա համար միայն երեխա լույս աշխարհ բերելը բավարար չէ: Ծնողը պիտի խոսի իր երեխայի հետ: Խոսքը երեխայի ինքնաբուխ վարքի ճնշման, ձանձրալի բարոյախրատականի ու միալար հանդիմանությունների մասին չէ: Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխային, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, մարդուց ու մարդկությունից, բարուց ուչարից, լավ ու վատից, հասարկությունից, արժեքներից, հայրենիքից, ծնողից, տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կտա կամ կփոխանցի իր զավակին:

Ուսուցչի և ծնողի համագործակցությունը. Շատ կարևոր է ,որ ուսումնական գործընթացում սովորողի հետ տարվի ճիշտ և համակողմանի աշխատանք: Ուսուցիչն այստեղ իրավունք չունի սխալվելու,ինչպես և ծնողը: Ի՞նչ ակնկալիք կարելի է ունենալ այն աշակերտից, որ դասերին հաճախում է հենց այնպես, առանց ուշադրության, առանց պատասխանատվության տարրական զգացումի, անտարբեր է իր դասարանի մաքրության, իր դասընկերոջ, իր աշխատանքային սեղանի կոկիկության, տետրի մաքրության, գեղեցիկ ձեռագրի և այլ նմանատիպ կարևոր մանրուքների նկատմամբ: Ի՞նչ ակնկալել այն աշակերտից, որ դպրոց է գալիս զուտ ընկերներին տեսնելու, նրանց հետ չարաճճիություններ անելու և ուրախ ժամանակ անցկացնելու համար: Նման աշակերտին կարելի է «փրկել» միայն կարգապահությամբ:

Չի կարելի դասի գալ, երբ հավես կամ տրամադրություն կա, և հակառակը՝ չգալ , երբ տրամադրություն չկա : Մի՞թե մեր այս « հավեսով» աշակերտներն են լինելու մեր վաղվա «հավեսով» քաղաքացիներն ու պետության «հավեսով » ղեկավարները: Մինչդեռ դիսցիպլինան ու պլանավորվածությունը կարգավորում են մարդու էներգիան ու կյանքին հաղորդում այն տեմպոռիթմը, որը կապահովի բարեկեցիկ, ապահով կյանք,որի դեպքում շահողը մեր աշակերտն է լինելու և մեր հասարակությունը: Այստեղ է, որ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող

համագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և, գոնե, դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:
Աշակերտի վարքի, համադասարանցիների հետ հարաբերություններում հարգանքի, ընկերասիրության, զսպվածության, ինքնատիրապետման ցուցաբերման, կոլեկտիվում ինքնադրսևորման ու միասնության պահպանման, այսինքն՝ լայն իմաստով անձի ձևավորման ու դաստիարակության հարցերը արդյունավետ լուծելու համար ուսուցիչը պետք է պատրաստակամ լինի լսելու և տվյալ աշակերտի հետ անհատական աշխատանքը պլանավորելիս նկատի ունենալու նաև ծնողի կարծիքը:
Աշակերտին ճանաչելու, նրա հոգեբանությունն ու վարքը արագ ըմբռնելու, աշակերտի վրա ազդելու, ներգործելու հարցերում ծնողի դերն անփոխարինելի է: Ծնողն իր հերթին պիտի լսի և ընդունի այն նկատառում-դիտողությունները, որն անում է ուսուցիչը, եթե անգամ շատ դեպքերում համաձայն չէ: Եվ որպեսզի ծնողը անտեղի չհակադրվի ուսուցչին,ինքնանպատակ քայլեր չանի, անհրաժեշտ է վստահություն ուսուցչի նկատմամբ: Իսկ այդ վստահությունը պետք է վաստակել…

Ուստի,արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացված սկզբունքներին.

- **Վստահել:** Ծնողների հետ արդյունավետ շփումը և հաղորդակցումը սկսվում է վստահությունից: Վստահության կարևոր պայման է ստացված ինֆորմացիայի գաղտնի պահելը:
- **Պահպանել երկկողմանի կապ**: Արդյունավետ հաղորդակցում հաստատելը թույլ է տալիս երկու կողմերին էլ հասկանալ միմյանց պահանջները և նպատակները: Երբ ուսուցիչը խոսում է ծնողների հետ պետք է հարցեր տա ոչ միայն ուսումնական բնագավառներից, այլև աշակերտների հետաքրքրություններից:
- **Համագործակցել**:Համագործակցող կողմերը ընդհանուր եզրեր պետք է գտնեն հաջողության հասնելու համար: Երբ առաջանում է որևէ խնդիր,դժվարություն, պետք է այն քննարկել ծնողների հետ: ՈՒսուցիչը պետք է միշտ հիշի, որ ընտանիքները տարբեր են, և բոլորի հետ գործընկերային հարաբերություններ հաստատելիս պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:

- **Կրել ընդհանուր պատասխանատվություն**: Ծնողները և ուսուցիչները պետք է կիսեն պատասխանատվությունը:
- **Լավատես լիել**: Ծնողների և ուսուցիչների փոխհարաբերությունները կառուցվում են լավատեսության հիմքի վրա: Ծնողների հետ հաղորդակցությունը սկսելիս անհրաժեշտ է խոսակցությունը սկսել դրական,լավատեսական նոտայով:
- **Պահպանել ջերմ հարաբերություններ**: Պիտի լինել ընդունող և աջակցող
- **Խթանել և քաջալերել**: Որպեսզի ծնողը իրեն զգա արժեքավոր,պետք է լսել ծնողի առաջարկները,ուսուցումն արդյունավետ կազմակերպելու իր մոտեցումները:

Որպեսզի ծնողները ճիշտ հասկանան իրենց դերը դպրոցի գործունեության և իրենց զավակի կրթության գործընթացի մեջ,նրանք պետք է իմանան իրենց իրավունքները և պարտականությունները: Շատ ծնողներ երբեք չեն ուսումնասիրում այն ամենը, ինչ ամրագրված է չափորոշչում:Այդ հարցում ուղղորդողի դերում պետք է լինի ուսուցիչը: Այս հարցը կարելի է լուծել ծնողական ժողովների ընթացքում՝ծնողներին ծանոթացնել չափորոշչային պահանջներին,իրենց ,ուսուցիչների և իրենց երեխաների իրավունքներին ու պարտականություններին:

Ըստ դաստիարակության բովանդակության առանձնացնում են դաստիարակության հետևյալ տեսակները.

- Մտավոր
- Աշխատանքային
- Ֆիզիկական
- Բարոյական
- Հոգեբանաբարոյական
- Գեղագիտական
- Իրավական
- Հայրենասիրական
- Սեռային և սեռական
- Տնտեսագիտական
- Բնապահպանական

Ինստիտուցիոնալ տեսնակյունից առանձնացվում են դաստիարակության հետևյալ տեսակները.

- ընտանեկան
- կրոնական
- հասարակական (նեղ իմաստով)
- հակասոցիալական
- շտկողական /կորեկցիոն/

Երեխայի դաստիարակությունը այնպես պետք է կառուցել, որ նրա մոտ գիտելիքի պահանջ ձևավորվի: Խոսքը ոչ միայն դպրոցական կարգապահության, այլ նաև շրջապատող աշխարհի մասին է: Երեխան պետք է իմանա, որ նա կարող է ճանաչել աշխարհը, ինչ որ նոր հետաքրքիր բան հայտնաբերել, կարևոր հայտնագործություններ անել: Երեխան պետք է դրանից հաճույք ստանա: Դրանով ձևավորվում է հետաքրքրությունը: Հարկավոր է թողնել, որ երեխան ինքնուրույն գնահատի իր արարքը: Նույնիսկ եթե նա սխալ է գործում,պետք չէ նրան կանգնեցնել, պետք է թույլ տալ,որ վերջացնի, հետո նոր բացատրել, թե ինչը ճիշտ չի արել: Դա նպաստում է փորձի ձեռքբերմանը և բարձրացնում է նրա ինքնագնահատականը:

Շատ կարևոր է թե՛ ընտանիքում, թե՛ դպրոցում սովորողի դաստիարակության հենքում դրվեն դաստիարակության բոլոր ձևերն ու տեսակները, որոնք փոխլրացնում են միմյանց: Չի կարելի լինել ֆիզիկապես առողջ, հայրենասեր, բարեվարք, սակայն չունենալ աշխատանքի նկատմամբ հարգանք: Ուստի դաստիարկության գործընթացը պետք է դիտարկվի որպես համալիր գործունեություն:

1.2 Ծնողի ներգրավվածության ուղիները դպրոցի կյանքին

« **Երեխաների հետ աշխատելու ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է**»:

«Ծնող լինելը/ծնողավարությունը սոսկ նպատակային ուղղություն չէ, այն ճամփորդություն է: Յուրաքանչյուր ճամփորդության համար մենք պետք է պատրաստված լինենք»:

Լինելով շատ պարտավորեցնող՝ ծնողավարությունը միևնույն ժամանակ

ամենաօգտակար փորձություններից մեկն է:Շատերը կարող են վիճել, որ 21-րդ դարում երեխաներ մեծացնելը ավելի բարդ է, քան երբևէ եղել է: Չնայած իրենց լավ մտադրություններին՝ շատ ծնողներ հակված են ծնողի դերում սխալ կերպով առաջնորդվելու: Մեր օրերում ավելի ու ավելի է բարդանում ծնողավարության հնացած մեթոդների կիրառումը երեխաների նկատմամբ: Այս հանգամանքը ծնողներին մտահոգում է, և նրանք մտածում են, որ երեխաները իրենց չեն դրսևորում «այնպես, ինչպես հարկն է»: Այսպիսով, ի՞նչ է հարկավոր ծնողավարությունը հաջողված ճամփորդության վերածելու համար:

Դաստիարակման դրական մոտեցումը ծնողավարության մոտեցում է: Այն մտածելակերպ է: Այն կառուցված է արդյունավետ ծնողավարության չորս սկզբունքների վրա՝

<u>Դրական դաստիարակման հիմնաքարերը</u>՝

Խնդրի լուծում	
Հասկանալ՝ ինչպես են մտածում եւ զգում երեխաները	
Ապահովելջերմություն Ապահովել կառուցվածք	Ծնողների ներգրավվածություն
Սահմանել հեռահար նպատակների սահմանում	

Դրական դաստիարակման հիմնաքարերը միայն երեխայի կյանքի վաղ շրջանում չէ, որ անհրաժեշտ են:Դրանք կարևոր են երեխայի զարգացման ողջ ընթացքում: Յուրաքանչյուր ուսումնական տարվա առաջին շաբաթվա ընթացքում անցկացվում է համադպրոցական ծնողական ժողով, որտեղ տնօրինությունն այլ խնդիրների հետ միասին պետք է ներկայացնի նաև ծնողների, ծնողական խորհուրդների իրավունքներն ու պարտականությունները: Դպրոց-ծնող կապն իրականացվում է հիմնականում ծնողական ժողովների միջոցով: Բոլոր էքսկուրսիաները , սոցներդրումները կատարվում են ծնողխորհուրդների միջոցով ու մասնակցությամբ: Երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացան գործում բավարար չէ ծնողների մասնակցությունը: Հոգալով իրենց երեխաների սոցիալական կարիքները մեծ մասը հետևողականորեն չէ նրանց կրթության հարցում, որը դժվարացնում է մանկավարժի աշխատանքը: Թույլ են ծնողների շրջանում տարվող մանկավարժական քարոզչությունը, ընտանիքի կողմից երեխայի նկատմամբ միասնական մեթոդամանկավարժական մոտեցումներն ու պահանջները: Փաստ է, որ ծնողները հետևողական են իրենց երեխաների իրավունքների պաշտպանության հարցում և անտարբեր ու ոչ

հետևողական պարտականությունների կատարման մեջ: Դպրոցի աշխատանքի վրա խիստ բացասական ազդեցություն են ունենում շրջապատում, հասարակության մեջ տեղի ունեցող անցանկալի երևույթները: Հարկ է էլ ավելի ուժեղացնել դպրոց- ծնող կապը:

« Ծնողների ներգրավվածություն » տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլ և այլ միջոցառումներին:

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: «Ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում: Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական ածի և հնարավորությունների նկատմամբ հավատ: Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը:

Մենք գիտենք, որ նպատակներից մեկը, որի պատճառով ծնողները խուսափում

են դպրոցական կյանքին մասնակցել, դպրոցի հետ կապված որոշակի անհարմարավետությունն է, որը հաճախ պայմանավորված է նրանով, որ ծնողները չգիտեն ՝ինչպես ներգրավվեն նրա կյանքին: Դպրոցները, որոնք հոգ են տանում ծնողների համար դպրոցի ուսումնական գործընթացում ընդգրկվելուն, ակտիվորեն օգնում են ծնողին ընդգրկման մեթոդները սովորելու գործում: Շատ դպրոցներում անցկացնում են սեմինարներ և իրականացնում են ծրագրեր ծնողների ընդգրկվածության հեշտացման համար և նրանց տեղեկացնում այն մասին, թե ինչ է տեղի ունենում դասասենյակներում: Ուսուցիչների ապահովումը ծնողների ընդգրկվածությանը աջակցող կոնկրետ միջոցառումներով և մեթոդներով, նպաստում է ծնողների հետ հարաբերության առաջացած շփոթության կրճատմանը: Ընկերական կախվածությունը դպրոցի և ծնողների միջև արդյունավետ հարաբերության հաստատման առաջին քայլն է: Ընկերական մթնոլորտի ստեղծման համար դպրոցը պետք է ապահովի ծնողների հետ հաղորդակցման հարցերում ուսուցիչների պատրաստվածությունը, որն իր մեջ ներառում է՝

- Լինել նախաձեռնող ծնողի հետ կապ հաստատելիս
- հաղորդել տեղեկություն
- ծնողներին տալ նյութեր
- ստեղծել կայք-էջ
- զրուցել հեռախոսով
- ուղարկել հաղորդագրություն

Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և՛ դպրոցական հասարակության, ծնողների և՛ աշակերտության վրա:

Ստորև ներկայացնենք յուրաքանչյուր խմբի օգուտը.

Օգուտ աշակերտին. Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպիսին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.

- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, նրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.

- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.

- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.

- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.

- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Օգուտ ծնողին. Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

- Ավելի է հասկանում սեփական որդուն.

- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.

- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները.

- Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի

կրթության և աստիարակության գործընթացին.

- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ: Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Օգոուտ ուսուցչին.

- Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:
- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից.
- Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություններ եխայի մասին:

Օգուտ դպրոցին. Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.

- Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.
- Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.

Տարրական դպրոցում ծնողները ավելի են ներգրավված ուսումնական գործընթացին, հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց, դպրոց-ծնող-ուսուցիչ կապն ավելի ամրապնդված է, քան միջին և ավագ դպրոցներում: Միջին և ավագ դպրոցներում ներգրավվածությունը մեծացնելու համար մեր դպրոցում մշակեցինք հատուկ ռազմավարություն, որը ծնողին կապեց դպրոցի հետ: Ռազմավարությությունը հետևայալն էր՝ հանձնարարվեց միջին և ավագ դասարանների դասղեկներին կազմակերպել տարատեսակ բնույթի միջոցառումներ ծնողների և սովորողների մասնակցությամբ /կլինի դա կրթական, սպորտային, պարային և այլն/: Եվ մի կարևոր հանգամանք ևս,որ պետք է

անպայման ներառել միջոցառումներին կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ երեխաներին,քանի որ հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն իրավունքներն,ինչպես մյուսները:

Կազմակերպվեց սպորտլանդիա, որտեղ աշակերտները մրցում էին իրենց ծնողների հետ: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին,թե ինչպիսի հոգատարությամբ էին օգնում ընկերները իրենց հաշմանդամ ընկերոջը հաղթահարել դժվարությունները:Հաղթող թիմը պարգևատրվեց

շնորհակալագրով: Կազմակերպվեց մրցույթ – միջոցառում <<Տեխնոլոգիա>> առարկայի շրջանակներում, որին մասնակցեցին թե՛ ծնողները, թե՛ աշակերտները: Ծնողները մեծ ոգևորությամբ էին մասնակցում և օգնում երեխաներին:

5-րդ դասարանի աշակերտները կազմկերպել էին միջոցառում՝մայրիկների տոնին նվիրված, անակնկալներով լի,որի ընթացքում յուրօրինակ ձևով նկարագրում էին իրենց մայրիկներին և ուսուցիչներին,որին մասնակցում էին նաև մայրիկները,ինչի արդյունքում էլ ավելի սերտացան ուսուցիչ – ծնող հարաբերությունները:

7-րդ դասարանի աշակերտները իրենց դասղեկի հետ կազմակերպել էին անակնկալ-հանդիպում մայրիկների հետ,նվերներ և քաղցր հյուրասիրություն պատրաստել իրենց ձեռքերով,որի արդյունքում հանդիպումն անցավ շատ ջերմ մթնոլորտում:

8-րդ դասարանում անցկացվեց մրցույթ աշակերտների և ծնողների միջև՝գիտելիքների ստուգման նպատակով:

Ազգային երգ ու պարի միջազգային օրվան նվիրված կազմակերպվեց միջոցառում,որին մասնակցում էին նաև ծնողները՝ երգում էին,պարում էին:

Որոշվեց դասալսումներ անցկացնել ծնողների կողմից 8-9-րդ դասարաններում, որի արդյունքում ծնողները խոստովանեցին,որ իրենց երեխաներին նորովի ճանաչեցին,քանի որ երբեմն դասղեկը ինչ որ հատկանիշ էր ներկայացնում և իրենք զարմանում էին:

Ծնողները նաև իրար հետ շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցին միմյանց: Նրանք շատ ոգևորված էին, և խնդրում էին ,որ այդ միջոցառումները կրեն շարունակական բնույթ: Իսկ երեխաները,տեսնելով իրենց ծնողների ոգևորվածությունը,էլ ավելի էին ոգևորվում :

Այպիսով, ելնելով մեր դպրոցի իրականացրած ծնող-դպրոց համագործակցությունից եկանք այն եզրահանգման, որ համգործակցությունը հաջողված էր և դրական ազդեցություն ունեցավ սովորողների անհատականության և կրթական ուսումնառության վրա:

Ծնողների ներգրավվածությունից ստացված օգուտը պարզ է: Հետազոտությունները ցույց տվեցին, որ ծնողների ներգրավվածությունը ոչ միայն բարելավում է աշակերտների վարքն ու հաճախումը, այլև դրականորեն է ազդում աշակերտների ձեռբերումներին:

Առաջարկություն՝

Ես առաջարկում եմ նախ և առաջ լսել, թե ինչ է ասում Ձեր երեխան: Հաճախ ծնողները այնքան զբաղված են լինում՝ իրենց երեխաներին ասելով, թե ինչ անեն և ինչ չանեն, որ մոռանում են լսել նրանց կարծիքը:Իմացեք, թե ինչի մասին է մտածում, ինչից է վախենում և ինչ է երազում Ձեր երեխան: Որքան լավ հասկանաք Ձեր երեխայի կարիքները, այնքան լավ ծնող կդառնաք:

Պետք է խրախուսել կամավոր ծնողներին: Ակտիվ կամավոր ծնողին/ներին հանձնել նվեր/ներ կամ «Ամենաակտիվ ծնողին»՝վկայական/պատվոգիր:

Եզրակացություն

Աշխարհը շարունակ փոփոխվում է: Արդի աշխարհը հետևանքն է մեր երեկվա գործելակերպի ,իսկ մեր այսօրվա գործողությունները պայմանավորում են մեր ապագան: Այս գիտակցությամբ մենք կարող ենք այսօր օգնել մեր աշակերտներին՝ հետազոտելու և վերլուծելու այն գործընթացները,որոնք ներգործություն ունեն

ապագայի ձևավորման վրա: Հարկավոր է ուղղորդել նրանց ,որպեսզի կարողանան գիտակցված և պատասխանատվությամբ գործել՝ նպաստելով ավելի բարվոք ապագայի կերտմանը: Այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար պետք է համագործակցային հարաբերություններ ստեղծել ուսուցչի և սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ:

Ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը:

Լայն իմաստով անձի ձևավորուման ու դաստիարակության հարցերը արդյունավետ լուծելու համար ուսուցիչը պետք է պատրաստակամ լինի լսելու և տվյալ աշակերտի հետ անհատական աշխատանքը պլանավորելիս նկատի ունենալու նաև ծնողի կարծիքը: Ծնողն էլ իր հերթին պիտի լսի և ընդունի այն նկատառում-դիտողությունները, որն անում է ուսուցիչը, եթե անգամ շատ դեպքերում համաձայն չէ:
Դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է:
Յուրաքանչյուր երեխա պետք է իրեն կարևորված զգա հասարակությունում: Բոլոր երեխաները անկախ ֆիզիկական, հոգեկան մտավոր և զարգացման այլ առանձնահատկություններից, անպայման պետք է իրենց հասակակիցների հետ ներառվեն կրթության և դաստիարակության համակարգ:

Այսպիսով, եկանք այն համոզմունքին, որ ուսուցիչներն ու ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ:
Դպրոցը սովորողին տալիս է գիտական գիտելիքներ, դաստիարակում է, զարգացնում է մի շարք կարողունակություններ: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու, հարգելու, գնահատելու կարողությունները: Անձի ներդաշնակ զարգացման համար այս բոլոր որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Դաստիարակությունից է կախված երեխայի ընկալումը շրջապատող իրականության հանդեպ,նրա հարաբերությունները իր և շրջապատող մարդկանց հետ:

Գրականության ցանկ՝

1. **Դաստիարակչական աշխատանքը դպրոցում /Ձեռնարկ/** Խմբագիր Վարդան Ղանդիլյան/Մ. Դավթյան,Լ.Ալեքսանյան,Ն.Թորոսյան,Ա.Իվանյան;ՀՀ ԿԳՆ :Կրթության ազգային ինստիտուտ, 2012-160 էջ/

2. **Դաստիարակչական աշխատանքը դպրոցում/Ձեռնարկ/** Մելանյա Դավթյան; Լ.Ալեքսանյան,Ն,Թորոսյան,Ա.Վերդյան

3. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf **Ծնողների ներգրավվածությունը**

4. **https://resourcecentre.savethechildren.net/pdf/manual_for_positive_disciplining_opt_opt.pdf/Դրական ծնողավարման ձեռնարկ**

5. **http://www.hogeban.info/երեխայի- դաստիարակությունը.php**